

սանձը, ու աջ ձեռքով որ նոր կտորած էր, օրհնութիւն կուտար սովորական շարժումներով, որ դիւրին կը հասկցուի կիսով բարձրացուցած աջ բազուկին շարժումէն: Յաւալի էր որ այս ձեռքը կտորուած էր, վասնզի դիւրին պիտի ըլլար հասկնալ թէ քանդակագործը լատին կամ յոյն ազդեցութեան տակ էր, լատինական օրհնութիւն տալուն մէջ մատներուն դիրքը բոլորովին կը տարբերի յունականէն: Էջը որ ծածկուած էր զարգարուած և ասեղնագործուած զգեստով մը, հաւանաբար միեւնոյն պատկերամարտէն գըլխատուած էր: Այսու հանդերձ անկարելի էր վարանիլ անոր իսկութեան վրայ, թէպէտ և մարմնոյն զեղեցիկ և նուրբ ձեւը կրնայ ալ հասկցնել թէ ձիու ձեւէ մը առնուած է: Ամէն տարակոյտէ վեր սակայն, քանդակուած ձեւը ճիշդ է, ներկայութեամբ քուռակին որ իր մօրը քով կը խաղայ գլուխը վար զեղեցիկ և ճըշգրիտ կեցուածքով. այս ցոյց կուտայ թէ քանդակագործը բնական ճշգրիտ ուսումնասիրութիւն մը բրած է:

Խմբարձանին մէկ կողմը, աջին վրայ, կը տեսնուին պատկերներու հետքեր, մեծաւ մասամբ մուրձով կտորուած. ձախին՝ կան ուրիշ երկու պատկերներ, հագած՝ հովէն շարժող զգեստներ, որ նուազ աւրուած են: Իշուն ետեւի կողմը կը մնայ անվնաս:

Այս քանդակը շատ վայելուչ և զեղեցիկ է, պատկերներուն ընդհանուր հակամտութիւնը սա է որ քանդակագործը մտադրութիւն ունեցած է՝ որպէսզի անոնք ցածէն տեսնուին: Հաւանաբար ան դրան մը բարաւորն էր կամ պատի զարգարանք մը, Ս. Յովհաննու եկեղեցիին դրան վրայ հաստատուած(*):

(*) Յօդու ածագիրը՝ Clermont - Ganneau կը գրէ թէ սեղ. սղբակոն